

առ նա, զի յաւելուցու յօրագիրս. ինձ թուի թէ լաւ եւս իցէ ի մէնջ ուսանել Եւրոպայ զիրար:

Յետ կանուխ հարցմանց եւ քննութեանց վասն տեղուոյն ուր երթայցէ այս ժողովուրդ գաղթական յօսմանեան սահմանաց ըստ միաբան խնդրոյ գաւառաց իւրաքանչիւր: Արդո՞ւմցոց տուաւ Ախլձխա յարակից գաւառօք որ յօսմանցոյն մնաց ուսաց. կարսցիք ընկալան զՇօրեկէլ եւ զՓամբակ, այն ինքն է Շիրակ եւ Նիզ գաւառք, եւ պայագիտցիք զկողմանս Գեղարքունոյ շուրջ զՍեւաւաւ, մինչեւ ի Ղարապաղ: Իսկ յոյնք, որ սփռեալ էին ի գաւառս Հայաստանեայց, ամենեքին իբրեւ վեցհարիւր տունք, ընկալան զՅալզա, մօտ ի Թիֆլիս, ըստ կանուխ ընտրութեան իւրեանց: Ուղղափառք որոց առաւելագոյն մասն ի Կարին է, այլ ի Կարս չկայ եւ ոչ ոք. իսկ որ ի Պայագիտ մինչ ի Թօփրաք Գալէ եւ յԱլաշկերտ չգումարին ի հարիւր տունք:

Մանու աշխատութեան պէտք եղեն ինձ միաբանել զխորհուրդ ամենեցուն մերացն ի մի դիտաւորութիւն. դժուարագոյն եւս համոզել զնոսա թէ իսկապէս թողուն ուսք զնարաստացիկ գաւառսն. միայն թէ միշտ ի կամս իւրաքանչիւր թողուի զերթն կամ զմնալ, երկուտեք առաջի գնելով նոցա թէ ի մնալն ընդ իշխանութեամբ օսմանցոյն յիշեցէք զոր ընդ այսչափ դարս կրեցիք. եւ ի մեկնելն կանուխ յանձին կալարուք բազմադիմի նեղութիւն զանաչինն, եւ ապա կանքժ անդորր խաղաղութիւն:

Կարո՞յ գաւառ եւ հնուս եւ Թորթոմ միաբանեցին զիմել յԱխլձխա: Բասեն վերին եւ Եերքին ակն եղ ի Լօռի. միայն թէ ներքինն դրժեաց խոստմանն եւ յետ ընդունելոյ զիր ճանապարհի եւ եւս ի խորս եմուտ քրդանոցին, անցեալ յԱլաշկերտ: Իսկ ալաշկերտեայք առ հարցումն իմ նոցա ի կողմանէ պետութեան, թէ զի՞նչ եւ որպիսի՞ խորհիցին, տմարդութեամբ ետուն պատասխանի որպէս ի քրդաց ուսեալ էր նոցա լեճնաւարութիւն, թէ որպէս կամիմք՝ այնպէս առնեմք: Այսպէս ետուն պատասխանի եւ ցարքունի ոստիկանն, որ նստէր անդ յաղագս այնորիկ չմարթացան վճարել ինչ կարգաւորաբար, կէսք դանդաղագոյնս շարժելով կամայ թէ յոչ կամաց մնացին անդէն. եւ կէսք անգլուխ գաղթելով սփռեցան ի զանազան գաւառս:

Ձմերոյ ժողովրդեան ընտրութիւն զԱխլձխա այլեւայլ թղթովք գրեցի առ հասուածն արգո՞ւմցի ուղղափառաց իբրեւ յիսուն տունք եւ այն հարստագոյնք, որոց յանցելում աշնան ի լինել հաշտութեան եւ ի դառնալ Բասքեիչին ի ձմեռոց անցեալ էր ի Լօռի. գրեցի առ նոսա առանձնական եւ միաբանական թողթս յղեալ արքունի թղթատարաւ. ամենայն ասացին կորեան եւ չհասին ուր ուղղեալ էին. շունիմ ասել թէ ի նամակաց կայսն կորեան: Նոքա ոչ հաճեցան եւ մեղադիր լինէին մեզ թղթովք, թէ չյագեցա՞ք տակաւին ի շարափառ կողմանէն. եւ զի երկիրն այն նշաւակ է արշաւանաց թշնամեաց, եւ զի աւերակ է, քանզի զառաջինն քայքայեցաւ յառնուլ ուսաց զքաղաքն հրձիգութեամբ եւ արեան ճապաղեօք. երկրորդ յարշաւանս աճարացոյն, եւ երրորդ ի ճարակել անդ ժանտախտին, յորում հրով դատէր ուսն գտունս եւ զկարասիս, ուր բունեալ էր ախտն. այսպէս եւ այլովք պատճառօք մեղադիր լինէին մեզ: Յարագս այնորիկ ելեալ նոքա ի գնին տեղեաց տեղեաց ի Լօռի եւ ի Շիրակ եւ ի Փամպակ ընտրեցին զՂարաքիլիսէ աւան աւերակ, որ ի Փամպակ, զոր եւ կալեալ էր դարասցոց. եւ գնացեալ ի Թիֆլիս շորք ի նոցանէ յանուն ամէն կարնեցի ուղղափառաց խնդրէի ի Ստոնթբալօֆ⁹ կուսակալէ (զի Բասքեիչ գնացեալ էր ի Բեղոսպուրկ) զՂարաքիլիսէ Փամպակաւ: Պատասխանի առնէ նոցա Սոնթբալօֆ՝ թէ կարնեցոց տուան Ախլձխա, իսկ դուք զի վաճառական էք եւ արհեստագէտք, զի՞ խնդրէք յաւերակս Փամբակու: Նոքա իբրեւ ի խնդրոյ իւրեանց չկասեցան, շնորհէր նոցա իշխանն զխնդրելին: Այլ առ նմին տեսեալ նոցա զի չմարթացան արքունի ուժով զկարնեցիս] յիւրեանս կորզել, եւ զի ինքեանք սակաւաւոր մնան ի մէջ բազմա-

⁹ Ստրեկալով Ս. Ա.— ուսական բանակի զեներալ-ադյուտանտ, ուս-թուրքական պատերազմում մասնակցում էր էրզրումի գրավմանը, 1830 թ.՝ Թիֆլիսի ռազմական նահանգապետ: